ությունից շատ էր դատարկված և ուներ 1823 թ. միայն մոտ հինգ տարի առաջ վերաբնակված գյուղացիներ։ Կառավարում էր Շեֆի-բեկ Ֆատահ-բեկ-օղլին և մի ժամանակ տուրք էր վճարում Ղարաբաղի Աբուլ-Ֆեթ-խանին։ Այստեղ միայն Ուժանիսն ուներ հայ բնակչություն— 28 ընտանիք, մնացած 4 բնակավայրերը թրքաբնակ էին— 118 ընտանիքներով ներկայացված։ Մահալի բնակչության ընդհանուր թիվը այսպիսով՝ 146 ընտանիք էր[7] *բոլոր հինգ գյուղերում։*

Բաղաբյուրտի մահալը *ձգվում էր Ողջի գետի ձախ ափով շատ խորն և նախորդ պատերազմական գործողություններից և առհասարակ խառն ու անապահով ժամանակներից հետո՝ գրեթե զրկված էր իր նախկին բնակչությունից։ Նրա բնակիչները միայն 1822 թվականի նոյեմբերին էին վերադարձել արտասահմանից Ղարադաղի Աբուլ-ֆեթ-խանի մոտից և դեռ որոշակի գյուղեր չէին հաստատել։ Նույնիսկ մելիք Հուսեին-Ղուլիի (Մելիք-Փարսադանյան Հովհաննեսի) ընտանիքը իր ազգականներով,* ռանչպարներով, *քահանաներով, ապրում էր ձմեռանոցի բնույթ կրող Բաղաբյուրտ բնակավայրում, որտեղ ապրում էր մահալի ամբողջ բնակչության 243 ծխից գրեթե կեսը՝ 104 ընտանիք՝ հայ— 80, թուրք—163 ծուխ։*

Փիսիանի մահալը և Զանգեզուրի մահալի *մի մասը միայն Ողջի՝ (Կապան) գետի ձախ ափով էին մտնում ռուսական պետության սահմանների մեջ։ Փիսիանը գրավում էր Աճանան և Ողջի (Օխչի) գետերի միջև եղած տարածությունը Կավարտ և Կատար պղնձահանքերով, իսկ Մեղրու-Արեգունու-Զավընդուրի լեռնաշղթան ձգված էր ավելի հարավ արևելյան ուղղությամբ մինչև Զանգեզան։ Այս շրջանը 1823 թվականին միայն չորս ամիս առաջ Մահմեդ-Հուսեյն-Սուլթանի առաջնորդությամբ Ղարադաղից հանած գյուղացիներով էր վերաբնակեցրած, բոլոր բնակավայրերը դեռ ձմեռանոցների նման էին և այդ պատճառով նրանցից 35-ը պետական մասնաժողովի կողմից ցուցակագրված են որպես ձմեռանոցներ*[8]*, բացի 5-ից, որոնք հիշատակվում են որպես գյուղեր՝ Կավարտ, Կատար, Կարաչիմանլի, Բախտիարլի, Զանգեզան։ Այդ ձմեռանոցներից շատերը, ինչպես և հարևան Բարգուշատի և Բաղաբյուրտի մահալներում, դեռ նույնիսկ չէին ստացել իրենց վերջնական անուններն ու կոչվում էին ըստ իրենց այս կողմերը տեղափոխող բեկերի անունների՝ Մահմեդ-Հուսեին-Սուլթանի, Հուսեյն-Ալի, Մուլլա-Նազալի, Իբրահիմ։ Մահալի կառավարությունն էլ հանձնված էր ներգաղթողներին բերող սուլթան Մահամեդ-Հուսեյնին։ Բնակչության ընդհանուր թիվը ցուցակագրված է 890 ծուխ, սրանցից 10-ը հայ, մնացած 880-ը՝ թուրք։*

Այս տվյալները թույլ են տալիս կազմելու № 1 աղյուսակը, որը գաղափար է տալիս 1823 թ. այս գավառում եղած բնակչության թվի, նրա ազգային կազմի, նույնպես և բնակավայրերի տիպերի տեղաբաշխման մասին ըստ մահալների։

Եթե վերլուծելու լինենք այս աղյուսակը, կգանք հետևյալ եզրակացության՝

---

[7] *Այս գյուղերից Խոջագյանը Բարգուշատ՝ Բաղարշայ գետի ափին, այժմ գտնվում է Ադրբեջանական հանրապետության սահմաններում։*

[8] Зимовники.